ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի՝ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԾԱՂԿԱՁՈՐ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ՀԱՃՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1.1-ԻՆ ՄԱՍԻ, 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1593 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հաճն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշմամբ որոշել է.

«1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող

հարցն սպանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշման 3-րդ կետում գործի շրջանակներում պարզման ենթական հանգամանքների համատեքստում Սահմանադրական դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին, որ՝

համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորություն չնախատեսելը, և

համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ նախաձեռնող խմբի համար ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի նշանակումը մերժելը կամ պետական բյուջեի միջոցների հաշվին այդպիսի ծախսերի կատարման համար միջոցներ չնախատեսելը

արդյոք չեն հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման:

Նախ, Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

Սահմանադրական հիշյալ նորմերի համատեքստում՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող հարաբերությունները կարգավորող այլ օրենքների համապատասխան կարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորություն չունեն:

Միաժամանակ, տեղական հանրաքվեների, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցով հանրաքվեների նախաձեռնումը, նշանակումն ու անցկացումը տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության կողմից պատվիրակված լիազորություններ չեն, ինչը նշանակում է, որ պետության կողմից պատվիրակված լիազորությունների՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման վերաբերյալ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը դրանց նկատմամբ կիրառելի չէ:

Հաշվի առնելով հիշյալը՝ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքների համատեքստում պետք է անդրադառնար հետևյալ հարցադրումներին, թե՝

ա) վիճելի իրավակարգավորումներում առկա «օրենսդրական բացերն» առաջացրե՞լ են կամ կարո՞ղ էին առաջացնել սահմանադրականության խնդիր՝

տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների պաշտպանության առումով,

բ) արդյոք այդ բացերը հնարավոր չէր հաղթահարել և հաղթահարված չեն եղել Սահմանադրության համապատասխան դրույթների անմիջական կիրառման միջոցով, այնպես, որ այդ մարմինների, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի իրավունքների պաշտպանությունը երաշխավորված լիներ, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվե նախաձեռնելու լիազորության բացակայության պարագայում:

Այլ կերպ ասած՝ «իրավունքի բացի» վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկայացված դիմումը բավարարե՞լ է արդյոք Սահմանադրական դատարանում դրա հիման վրա գործը քննության ընդունելու համար անհրաժեշտ և պարտադիր այն նախապայմանները, որոնց բովանդակության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն է արտահայտել Սահմանադրական դատարանը:

Այսպես, «իրավունքի բաց» կամ «օրենսդրական բաց» իրավական երևույթների վերաբերյալ Սահմանադրական դատարանը հետևողականորեն ձևավորել և զարգացրել է բավական որոշակի, կայուն և համապարփակ դիրքորոշումներ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն՝ իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ արձանագրել է. «(...) Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հան-

գեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Իսկ Սահմանադրական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1434 որոշմամբ ամրագրվել է այն իրավական դիրքորոշումը, որ՝ «(…) առկա չէ օրենսդրական բաց բոլոր այն դեպքերում, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ»:

Սահմանադրական դատարանի վերը նշված և այլ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ հստակ և կանխատեսելի սահմաններ են գծում «իրավունքի բացի» կամ «օրենքի բացի» նկատմամբ սահմանադրական վերահսկողության թույլատրելի շրջանակի համար, սահմանում են այդ բացերի սահմանադրականության ստուգման վերաբերյալ դիմումների թույլատրելիության որոշակի չափանիշներ:

Հաշվի առնելով պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման և համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենք ընդունելիս համայնքների կարծիքը պարտադիր լսվելու վերաբերյալ Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասի և 190-րդ հոդվածի պահանջները՝ կարծում եմ՝ որևէ պարագայում չի կարող խոսք լինել օրենսդրական բացի մասին, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ:

Այս կապակցությամբ, միաժամանակ, գտնում եմ, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մասով օրենքի այս կամ այն «բացի» սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող էր լինել, եթե՝

ա) վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող էր խախտել կոնկրետ տեղական ինքնակառավարման մարմնի իրավունք,

բ) իրավակարգավորման լիարժեքություն ապահովող նորմի բացակայության կամ այդ նորմի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվել էր տեղական ինքնակառավարման ոլորտում օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը,

գ) օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված էր հակասական իրավակիրառական պրակտիկա:

Վերոգրյալ դիրքորոշումների տրամաբանությունից հետևում է, որ գործի վարույթն ենթակա էր կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու և սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով ու իր նախաձեռնությամբ համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի պահանջները՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարող էր համակարգային մոտեցմամբ պարզել.

ա) որքանո՞վ է Սահմանադրությունը հստակ ամրագրել տեղական ինքնակառավարման մարմինների իրավազորության շրջանակները, այդ թվում՝ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորության պարագայում,

բ) Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու համար ի՞նչ ֆինանսական երաշխիքներ են նախատեսված, այդ թվում՝ նախաձեռնող խմբի՝ համայնքի բնակիչների

նախաձեռնությամբ համայնքների միավորման կամ բաժանման հարցով համայնքային կամ պետական բյուջեների հաշվին տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսեր կատարելու առումով:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1593 որոշման 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցադրումների հիման վրա և, մասնավորապես, պատճառաբանական մասի 4.1-4.3 կետերի իրավակարգավորումների վերլուծության արդյունքում կատարել է հետևյալ եզրահանգումը, որ՝

ա) (….) Սահմանադրության 190-րդ հոդվածի իրացումն ապահովելու նկատառումներով որպես համայնքների կարծիքը լսելի լինելու իրական հնարավորության բարձրացման երաշխիք կարող էր դիտարկվել, օրինակ, համայնքի ղեկավարին կամ համայնքի ավագանուն տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով օժտելու հնարավորությունը,

բ) (….) համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքով միայն համապատասխան համայնքի բնակիչներին օժտելը Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէր լինի, եթե ապահովված լինեին այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, քանի որ քննարկվող դեպքում բուն խնդիրը վերաբերում է համայնքների միավորման կամ բաժանման հարցը լուծելիս ոչ թե կոնկրետ հանրաքվեի ինստիտուտին կամ այն նախաձեռնելու սուբյեկտների կազմին, այլ առավելապես համայնքի կարծիքն իրապես լսելի դարձնող արդյունավետ մեթոդին և դրա կիրարկման արդյունավետությունն ապահովող կառուցակարգերին (էջ 20):

Նման տարաբովանդակ դիրքորոշումների համատեքստում՝ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1593 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետին համապատասխան՝ վիճելի իրավակարգավորումները՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին և 6-րդ հոդվածի

2-րդ մասերը ճանաչել է Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր՝

ոչ թե տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու մասով իրավակարգավորման լիարժեքություն ապահովող նորմի բացակայության կամ այդ նորմի թերի կանոնակարգման հիմքով, որը պետք է հանգեցներ տեղական ինքնակառավարման ոլորտում օրենսդրական բացի հիմքով օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործմանը,

այլ այնքանով, որ այդ վիճելի կարգավորումները չեն ապահովել համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր,

ընդ որում՝ այդպես էլ չորոշակիացնելով, թե օրենսդրական ինչպիսի՞ անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի մասին կարող է խոսք լինել:

3. Սահմանադրության 190-րդ հոդվածի իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ՝ ա) համայնքների միավորումը կամ բաժանումը պետք է պայմանավորված լինել միայն հանրային շահերով, բ) համայնքների միավորումը կամ բաժանումը իրականացվում է բացառապես օրենքով, գ) համայնքների միավորման կամ բաժանման ժամանակ համայնքների կարծիքը լսելը Ազգային ժողովի պարտականությունն է՝ վերջինիս օրենսդրական գործընթացի շրջանակում, դ) համայնքի կարծիքը՝ Սահմանադրության 180-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, ընկալվում է որպես տվյալ համայնքի բնակիչների հանրության կարծիք:

Հիշյալ դիրքորոշումների համատեքստում, կարծում եմ, որ՝

առաջին, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1593 որոշման եզրափակիչ մասում **վիճելի իրավակարգավորումները չեն կարող հակասել կամ չունեն աղերս Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասի հետ, քանի որ համայնքների միավորման կամ բաժանման հիմքում ընկած է բացառապես**

հանրային շահը, և ոչ թե համայնքային նշանակության հանրային հարցերի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված համայնքի բնակչի շահը,

երկրորդ, բացի դրանից, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.3-րդ կետում և եզրափակիչ մասի 1-ին կետում՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ **համայնքի կարծիքը արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելը, կարծում եմ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի կարգավորման հարցն է՝ այն հիմնավորմամբ, որ օրենսդրական գործընթացի այդ փուլում համայնքների կարծիքը լսելը գտնվում է Ազգային ժողովի լիազորությունների իրականացման շրջանակում,**

երրորդ, ինչ վերաբերում է ՍԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.2-րդ կետում Սահմանադրական դատարանի կողմից կատարված այն եզրահանգմանը, որ համայնքի բնակիչների հանրության կարծիքն ունի ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական նշանակություն, ապա, կարծում եմ, որ **Սահմանադրության 190-րդ հոդվածի իրավակարգավորումների բովանդակությունից բխում է, որ Ազգային ժողովը պարտավոր է լսել այդ կարծիքը՝ առանց վերջինիս խորհրդատվական բնույթ հաղորդելու:**

4. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1593 որոշման պատճառաբանական մասի 4.4-4.5-րդ կետերում և եզրափակիչ մասի 2-3-րդ կետերում համայնքի բնակիչների նախաձեռնությամբ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ նախաձեռնող խմբի համար ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվեի նշանակումը մերժելուն կամ պետական բյուջեի միջոցների հաշվին այդպիսի ծախսերի կատարման համար միջոցներ չնախատեսելուն վերաբերող հարցերը, կարծում եմ, հանդիսանում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 7.1-րդ հոդվածի կարգավորման առարկա:

Իսկ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, իմ կարծիքով, **բխում են Սահմանադրության 110-րդ և 186-րդ հոդվածների կարգավորումների բովանդակությունից, քանի որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների նպատակային օգտագործումը գտնվում է համայնքի ավագանու և Ազգային ժողովի՝ բյուջետային գործընթացներին առնչվող լիազորությունների իրականացման շրջանակում:**

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի և Կոտայքի մարզի «Նոր Հաճն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

24 մայիսի 2021 թվականի